

# ՀԱՅ ՍԿԱՈՒՄՆԵՐ

ԿԻՍՄԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ

## “Haï Scout,”

(Armenian Scout)

Կազմեց ԿԱՐՕ Մ. ՈՒՇԱԳԼԵԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 17-18

16 ՅՈՒՆԻՍ 1920



Brotherly Greetings to all Scouts in the International  
JAMBOREE RALLY IN LONDON.

ARMENIAN SCOUTS

ՄԵՐ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՈՂՋՈՅՆՆԵՐԸ

Հոնտոնի Միջազգային Սկաուտական Խմբաւորումի:

ՀԱՅ ՍԿԱՈՒՄՆԵՐ



TO THE SCOUTS OF ALL NATIONS

Dear Scout Brothers:—

While you are fully enjoying in your countries the fundamental human Rights of Freedom and Safety of life, here in Asia, some of your brothers have not got even the essential means to enjoy their Right of Freedom. A great majority of them, almost eighty out of hundred, have no home, no father and mother, whose caresses are everything for the youth. They have in most cases, willingly sacrificed their most sacred treasures in the name of Humanity and Rightousness: their fathers have joined so many heroic colors and have fought bravely to death.

In spite of all these, their eyes are all shining with bright hopes for a prosperous future and their hearts are swollen with most generous feelings...

They are happy, because they have got a Fatherland and are preparing themselves to be honorable citizens to their Country, and to Humanity in general. Moreover, they are proud that after so many horrible trials, they find a chance of raising the Scouts' Banner, along their own, in the East.

It is much desirable that you get in touch with them by correspondence and by other means. Surely their scouting pictures, and particularly, their adventurous life stories will be surprisingly interesting to you, and thus, perhaps you will come to know the endowment of courage engraved in the veins of your brothers left forlorn in the dark corner of this sad part of the world.

These are all Armenian Scouts. Their Fatherland is Armenia. The Mount Ararat, which is mentioned in the old testament in connection with the deluge, on the top of which rested the Ark of Noah, is in Armenia. This mountain is very sacred and inspiring for the Armenians, and many of the Armenian poets have dedicated their songs to Her. It is the emblem of Mount Ararat or Massis that the Armenian Scout carries on his hat and girdle, arround which he has written his motto: «Rise! Raise!».

They regret their absence at the Jamboree Unfortunately they could not help it. Though

ԱՄԲՈՂԶ ԱԶԳԵՐՈՒ ՊՕՅ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ

Սկաուտներ,

Երբ դուք այսօր Ձեր հայրենիքներուն մէջ կը վայելէք ամբողջ մարդոց իրաւունքը եղող ազատութիւնը եւ կեանքի տանելի պայմանները, հոս, Ասիոյ մէջ ունիք սկաուտ եղբայրներ, որոնք չունին տակաւին միջոցներ իրենց ազատութիւնը վայելելու համար. Ասոնցմէ շատ մեծ մաս մը, գրեթէ հարիւրին ութսունը, չունին տուն, հայր եւ մայր, որոնց գուրգուրանքը այնքան կարեւոր է պատանիներու համար: Անոնցմէ շատերուն հայրերը եւ մեծ եղբայրները զոհուած են, արդարութեան համար կռուող բանակներուն մէջ կռուելով, որուն փոխարէն, հոս, իրենց քոյրերը եւ մայրերը զոհ գացած են թշնամիին:

Սակայն հակառակ ասոր, զուարթ եւ կորովի են անոնք, անոնց աչքերը յոյսով լեցուն եւ սիրտերը բարի զգացումներով ուռած են...

Անոնք երջանիկ են, որովհետեւ Հայրենիք մը կը հիմնեն այսօր եւ իրենք իրր լաւագոյն բաղաբացիներ կը պատրա տուին, այդ հայրենիքին ծառայելու եւ անոր դրօշը բարձրացնելու համար:

Հպարտ են անոնք միեւնոյն ատեն որ, այսքան տաժանքոտ անցքերէն վերջ. Արեւելի սկաուտական դրօշակիրներէն մին են:

Շատ փափագելի էր որ դուք ծանօթանայիք իրենց, յարաբերութեան մտնելով թղթակցութեամբ եւ նկարներ փոխանակելով. Անոնք շատ սիրուն անակնկալներ պիտի ընեն իրենց սկաուտական նկարներէն եւ մանաւանդ իրենց անձնական արկածներու պատմուածքներէն զրկելով Ձեզ, որոնց մէջ, չարքաշութեան զարմանալի օրինակներ պիտի գտնէք դուք:

Եւ ասոնք հայ սկաուտներն են:

Անոնց երկիրը Հայաստանն է, որ տակաւին նոր հիմնուած է:

Հայաստանի մէջ կը գտնուի այն լեռը որ յիշուած է Ս Գիրքի ջիհեղեղի պատմութեան մէջ Արարատ անունով, որուն վրայ նստաւ Չոյի Տապանը. Հայերը այդ լեռան Մասիս անունն ալ կուտան եւ իրենց համար շատ նուիրական եւ կորով ներշնչող լեռ մըն է, որուն համար հայ բանաստեղծներ երգեր հիստած են. Ահա, այս Մասիս լեռան նկարն է, որ հայ սկաուտը կը կրէ իր գլխարկին եւ գօտիին վրայ, որուն շուրջ գրած է իր նշանաբանը, «բարձրացիր բարձրացուր»:

Այս խմբաւորումէն իրենց բացակայելուն կը ցաւին, տակայն դժբաղդարար հակառակը չէին կարող ընել, Թէեւ ովկիանոսներ կան անոնց եւ ձեր միջեւ, սակայն անոնց սիրտերը կը տրոփեն սէրով հանդէպ անոնց, զորս զեռ դէմքով անձանօթ. սակայն կատարելապէս ծանօթ են ա-



Oceans stretch between them and you, their hearts are throbbing with love to those whom they do well know in their good feelings, as they are rallied under the same scout's banner.

Armenian scouts are sending to you the present Spacial Number as a token of Universal Brotherhood. At the same time they greet you heartily and ask you to establish a relation with them, to enrich their Scouting Knowledge, so that if later on a chance of your visiting Armenia is presented, there you will find, among the beauties of Nature, many thousands of your hospitable brother scouts.

*In behalf of the Armenian Scouts  
The Editor*

նունց գրացումներուն, որովհետեւ նոյն սկաուտական դրօշին ներքեւ խմբուած են:

Հայ սկաուտները ներկայ մասնաւոր թիւը ձեզ կը գրկեն ի յիշատակ համաշխարային եղբայրութեան. նոյն ատեն ձեզ սրտանց ողջունելով, կը խնդրեն որ իրենց հետ յարաբերութիւն մշակելով, ճոխացէք անոնց սկաուտական գիտելիքը, որպէսզի եթէ օր մը Հայաստան այցելելու առիթը նկրկայանայ ձեզ հոն բնութեան գեղեցկութիւններուն հետ գտնէք ձեր սկաուտ եղբայրները որպէսզի օր մը, երբ Հայաստան այցելելու առիթը ներկայանայ Ձեզ, հոն, բնութեան գեղեցկութիւններուն հետ գտնէք նաեւ Ձեզ հիւրընկալող սկաուտ հազարաւոր եղբայրները:

**Ի դիմաց հայ սկաուտներու  
ԽՄԲԱԳԻՐԸ**

*Կարս*



*Հայ սկաուտներու արշաւէն վերադարձ  
Armenian patrols return after scouting*



Scoutmaster

GENERAL R. BADEN-POWELL  
and  
Chief Scouts and Patrol Leaders  
of all Nations in the Jamboree

Dear Scouts:—

A splendid chance is represented to the Armenian Scouts' Organization to express its feelings and wishes to the Scouts of all Nations.

The Universal Scouting Organization, and specially, the Scouts' International Jamboree rally bring comfort and inspire us with bright hopes for the future. With the latter, after the queer heroism of war, which dug chasms among so many nations, young Scout-Citizens are trying once more to uplift the trodden Banner of Brotherhood, in spite of the unsuccessful trials of so many aged citizens.

We, Armenians, shall stick to the Scouts' colours more firmly than any other nation, for our lives have costed dearer to us than to any other nation, and also, because we are convinced that, to prepare a scout generation, means to fill up the space of our quantity, a sad result of horrible sufferings.

We want to be optimists in regard to the future Scout-Statesmen, who being reared among their Scout brothers, will be later on benevolent leaders of so many noble Nations, provided that the politician's armchairs do not reflect sardonic looks on the Scouts' tents and the rulers' scepters do not cross the Scouts' Sticks.

We eagerly wished to represent in London the Armenian Scouts, at least, with a patrol, where we could get acquainted with the Scouts of so many nations and get some moral profit out of them.

The present abnormal conditions have, unfortunately, kept us away from you, therefore we have dedicated this Jamboree Number to assure you that we are ever with you in Soul, if not in Body, for the time being.

Noble friends, please pass the Armenian Scouts' brotherly greetings to all Nations' Scouts presented in the Jamboree and left at home.

In Behalf Of the Armenian Scouts'  
Organization  
The Secretary

Սկսուի Պէտ

ԺԵՆԵՐԱԼ Ռ. ՊԱՏԸՆ ԲԱՌԻՐԼ

Պ. Պ. ՊԵՏԵՐՈՒՆ և ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒՆ  
Լօսօսնի Միջազգային սկսուսական «Ժամկոտ»-ի  
մասնակցող ազգերու.

Ազնիւ սկսուտանե՛ր

Շատ գեղեցիկ առիթ մը կը ներկայանայ մեր Հայ սկսուտական միութեան, հաղորդելու իր զգացումները և փոփոգները, ազգերու սկսուտներուն:

Որքան մխիթարական և ապագայի լուսագոյն յոյսերով լեցուն է այս կազմակերպութիւնը, մասնաւորապէս ժամկոտի խմբաւորումը: Ասով, պատերազմի տգեղ հերոսութենէն վերջ, որ աշխրպետներ բացաւ ազգերու միջև, պատանի քաղաքացիները կուզան հիմնելու այն եղբայրակցութիւնը, որ չը կարողացան իրագործել տարեց քաղաքացիները:

Մենք Հայերս, միւս բոլոր ազգերէն աւելի ամուր պիտի փորինք սկսուսական եղբայրացութեան յրօշին, որովհետև մեր կեանքը միւս ազգերէն աւելի սուղ արժած է մեզի և մենք պէտք ունինք որակով լաւ քաղաքացիներու լեցնելու համար քանակի պակասը:

Մենք կ'ուզենք լուստես ըլլալ ապագայի դիւանագէտներու գործերուն վրայ. — որոնք, սկսուտական շարքերէն անցած պիտի ըլլան — եթէ դիւանագէտի թիկնաթոռը հեքնանքով չը նայի սկսուտական վրանին, և լշխանութեան մականը չը խաչածուէ սկսուտական գաւազանը...

Որքան կը փոփոգէինք գոնէ խմբակով մը ներկայացնել Հայը, Ձեր ժամկոտին մէջ, որ առիթ մը պիտի ըլլար մեզի ծանօթանալու շատ մը ազգերու սկսուտներուն և օգտուիլ աւնոցմէ:

Եւ սակայն կարգ մը արգելքներ չը թուատրեցին մեզի իրագործել մեր փոփաքը, որուն փոխարէն Ձեզի կը դրկենք մեր այս հաւաքածոն. մասնաւորապէս պատրաստուած ներկայ ժամկոտին համար:

Ազնիւ բարեկամներ, հայ սկսուտներուս եղբայրական ողջոյնները, հաճեցէք հաղորդել ժամկոտին ներկայ եղող սկսուտներուն և տարէք զանոնք Ձեր երկրի միւս սկսուտ պատանիներուն:

Հայ սկսուտական միութեան  
Քարտուղար




Ա. ԳԱՍ.—ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

Երկրագործութեան մասին հիմնական գաղափար մը կազմելու համար, նախ՝ բոյսին և հողին կազմութեան մասին որոշ ծանօթութիւններ պէտք է ունենայ: Այնպէս որ, քանի մը դաս պիտի տանք բոյսի և հողի ուսումնասիրութեան:

**ԲՈՅՍԻՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ. ԲՁԻՁԸ.**—Նորածիլ բոյսի բարակ մէկ շերտին մէջ մանրադէտի տակ փոքր, կլոր, չորս բոլորը գոց պարկեր կը նշմարենք. ասոնց իւրաքանչիւրը կը կոչուի բջիջ:

Բուսային բջիջը երեք մասերէ կը բաղկանայ. (պատկ. 1)



(Բ) Բջջաբաղաձայնք. (Ն) Նախահիւք. (Կ) Կորիզ  
(Խ) Բջջախոռոչ

1. Բջջաբաղաձայնք որ բջիջը կը շրջապատէ և իր մէջ կը պարունակէ նախահիւթը և կորիզը:

2. Նախահիւթը. որ բջիջին ամող ու ապրող մասն է, երբ իր ծաւալը ընդարձակի իր մէջ պատռուածքներ և հետևաբար պարապութիւններ կը գոյանան որոնց բջջախոռոջ անունը կուտան: Նախահիւթը բջիջին շարժման մէջ գտնուող բորակածնային նիւթն է:

3. Բջջակորիզը, իրաբու վրայ փաթթուած և կլոր ձեւով, առ հասարակ բջիջին կեղրոնը գրաւող մարմին մըն է, որ կարեւոր դեր կը կատարէ բջիջին բազմացման մէջ:

Բջիջը՝ բոյսին կեանք ունեցող ամենափոքր

մասնիկն է: Ան կ'աճի, իր նմանը կ'արտադրէ: Բոյս մը բազմաթիւ բջիջներու արդիւնք է:


Բջիջները բազմանալով և իրարու քով հաւաքուելով կը կազմեն գործարան մը. գործարաններու ներդաշնակ համախուժումովն ալ ծնունդ կ'առնէ գործարանաւորութիւնը:

Բուսային գործարանաւորութեան մէջ իրարմէ անջատ երեք գլխաւոր գործարան կարելի է զանազանել: Արմատը, ցողունը և տերեւը: Ծաղիկը, պտուղը և հունտ կամ սերմը տերեւին փոխաձեւումէն յառաջ եկած են:

**ԱՐՄԱՏԸ.**— Արմատը բոյսին հողին մէջ գտնուող գործարանն է: Աւելի ճիշդ բացատրութիւն մը տալու և զինքը ստորերկեայ ցողունէն զանազանելու համար, ըսենք թէ, բոյսին հողին մէջ գտնուող այն գործարանն է որ իր վրայ չըկրեր պտուկներ և հետևաբար պտուղ և ծաղիկ: Արմատի մը մէջ կը տեսնենք գլխաւոր արմատը, արմատիկները, ծծիչ մազերը և գտակը:

Դիլաւոր արմատը (պատկ. 2) հողին մէջ ցողունը ուղղակի շարունակող մասն է: Իր վրայ կը կրէ երկրորդական արմատներ, որոնք իրենց կարգին ճիւղաւորուելով ծնունդ կուտան արմատներու:

Ամէն մէկ արմատիկի վերջաւորութեան մօտ շատ նուրբ թելեր կան, որոնք բոյսին ծծիչ մազերն են: Բոյսը հողէն ասոնց միջոցաւ է որ իրեն անհրաժեշտ անունդը կը ծծէ: Արմատիկներուն ծայրը կը գտնուի դիմացկուն մարմին մը որ կը կոչուի զսակ: Բոյսը ասոր շնորհիւ է որ հողին կարծր մասերէն ներս կը թափանցէ: Արմատին զանազան մասերը տեսնելու հա-



մար, անձրեւէ մը վերջ, զգոյշ կերպով քանի մը նորաբոյս ցորենի բուններ բահով մը արմատախիլ ընել կը բաւէ: Հոն կ'երեւան արմատիկները, որոնց ծայրը կը գտնուին սպիտակ թե-



լեր՝ ծծիչ մազերը, որոնք վերի վերոյ մէկ մի լիմէթր երկայնութիւն ունին:

Եւ կամ պնակի մը մէջ խոնաւ ծծուն թուղ-  
թի, կամ բամպակի վրայ, քանի մը գարիի  
հատիկներ բարեխառն միջավայրի մը. տակ մի  
քանի օր թողելէ յետոյ, բամպակին ետեւի  
կողմէ դուրս ելած արմատիկները դիտել ան-  
հրաժեշտ է:

Արմատը կ'ըլլայ, ուղղարմատ և խրճարմատ. —  
Արմատը հողին մէկ ունեցած դիրքին համեմատ  
կ'ըլլայ ուղղարմատ կամ խրճարմատ:

1. Ուղղարմատ է. երբ գլխաւոր արմատը  
սունակի մը ձեւը ունի և երկրորդական ար-  
մատներէն աւելի ծաւալուտ է: Օրինակ ճա-  
կընդեղին, բողկին և վայրի ստեպղինին (պատկ.  
3) արմատները:

2. Խրճարմատ է, ևրբ արմատի բոլոր ճիւ-




ղաւորումները գրեթէ միեւնոյն մեծութիւնը ու-  
նին և ցողունին միեւնոյն կէտէն կը մտնին:  
Օրինակ բոլոր արմատիքներու արմատները:

Կան բոյսեր, որոնք, իրենց բնական ար-  
մատներէն զատ, ցողունին զանազան մասերուն  
վրայ յաւելուածական արմատներ կը կրեն. այս  
վերջինները ինֆնարոյս արմատ անունը կ'առնեն:  
Օրինակ բազելի օգային արմատները (պատկ.  
4):

Ուրիշ բոյսեր, իրենց արմատներուն մէջ  
պահեստի սնունդ կ'ամբարեն. ասոնք ալ իշլե-  
կաձեւ արմատ կը կոչուին: Օրինակ, աստղա-  
ժաղիկի (Dahlia) արմատները:

Արմատը բոյսին հաստատուն և անաղային  
անկողնոյն գործարանն է. — Արմատը որքան  
խոշոր ու երկար ըլլայ, բոյսը հողին մէջ այն-  
քան ամուր հաստատուած կ'ըլլայ: Այսպէս ա-



ւելի հեշտ է արմատախիլ ընել ցորենի քան թէ  
առոյսի բոյս մը:

Արմատը, հողէն իր ծծիչ մազերու շնորհիւ  
է որ մետաղային սնունդները կը ծծէ: Անձրեւի  
կամ ոռոգման ջուրերը, հողին մէջ սուզուելով  
ու տարածուելով կը լուծեն անոր պարունակած  
կամ ազդեցող ապահովուած անկողնաւոր նիւթերը,  
ապա ծծուելով բոյսին ծծիչ մազերէն, ներս, ի-  
րենց հետ բոյսին կը տանին սոյն նիւթերը ո-  
րոնցմով կը սնանի բոյսը: Եւ որովհետեւ բոյսը  
իր տրամադրութեան տակ միշտ բաւականա-  
չափ լուծելի նիւթեր չունի, ծծիչ մազերը թը-  
թու հիւթ մը կ'արտադրեն որու շնորհիւ պարզ  
ջուրին մէջ անլուծելի ինչ ինչ նիւթեր լուծելի  
կը դառնան ու բոսէն կը ծծուին: Սա ալ ը-  
սենք որ այս գործողութիւնը բոյսին սննդա-  
ուութեան մէջ շատ փոքր դեր մը կը կատարէ:


ՅՈՂՈՒՆԸ. — Յողունը, արմատին հակա-  
ռակ ուղղութեամբ, ընդհանրապէս օդին մէջ  
ածող բոյսի գործարան մըն է: Իր վրայ կը  
կրէ պտուկներ, որոնք ծնունդ կուտան ճիւղե-  
րու, տերեւներու, ծաղիկներու և պտուղներու:

Մէկ քանի տարուան ճիւղ մը կամ աւելի  
ճիւղը ծառի մը բունը, ամէն տարի նորանոր  
կազմութիւններու ծնունդ տալով ինքն ալ շատ  
փոփոխական կազմութիւն մը ունի:

Այսպիսի ցողուն մը երբ կտրենք լայնքին  
միջահատ հատուածով մը, դուրսէն ներս կը  
տեսնենք վերնամաշկ, կեղեւ, կեղրուակաւ գլան,  
(Պատկ. 5) կեղրուական գլանին մէջ կ'որոշուին,  
դուրսէն ներս, փառ, փայտ և ծուծ: Փայտին և  
փառին մէջտեղ կը գտնուի նուրբ բջիջային  
խաւ մը, որ կը կոչուի ծնիջ գօտի: Այս խաւը  
բազմանալով դէպի դուրս փառ և դէպի ներս  
փայտ կը ծնի, կազմելով ներսէն նոր փայտ և  
դուրսէն նոր փառ:

Յողունին պաշտօնը. — Յողունը կը ծառա-  
յէ կրելու իր վրայ ճիւղերը և տերեւները, ինչ-  
պէս ծաղիկը ու անոր հետեւանքները: Կը ծա-  
ռայէ արմատի միջոցաւ ծծուած անկազմ հիւ-  
թերու մինչև տերեւ փոխադրութեան, ուր'է ալ





Պատ. 5

(A) Վերնամաշկ. (B) կեղև. (C ֆ) կեղծ փայլ կամ սպիտակուց. (D ֆ) Բուռն փայլ կամ կարծրափայլ (E) Ծուռծ:

բոյսին զանազան մասերուն մէջ կը տանի վայրէջ հիւթը որ բոյսը կը սնուցանէ:

Անկազմ հիւթը փայտին անօթներու միջոցաւ վեր կը հանէ. կազմուած կամ վայրէջ հիւթը փառի միջոցաւ բոյսին զանազան մասերուն մէջ կը բախէ:

Գարունին նորահատ որթի մը ճիւղէն աւել կը հոսի, խոշորացոյցով երբ կտրած տեղը զիտենք կը տեսնենք թէ, այդ աւելը փայտի անօթներէն դուրս կը վազէ:

**ԱՐՄԱՏԻՆ ԵՒ ՅՈՂՈՒՆԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ.** - Արմատը, ինչպէս և ցողունը կը գործածուին իրր մարդկային կամ կենդանական սնունդ, բժշկութեան և ճարտարարուեստի մէջ:

1. Սննդարար արմատներ են, ստեպղինը, փողկը, վայրի ստեպղինը ևն.:
2. Պահարային արմատներ են. (այսինքն կենդանիներու իրր կեր գործածուող) ճակնդեղը, պաճարային ստեպղինը, կարմրաբողկը ևն.:
3. Ճարտարարուեստական արմատներ են, շաքարի ճակնդեղը, տորոնը, սրճանդերդը ևն.:
4. Բժշկական արմատներուն մէջ կը տեսնուին, օձադեղաբոյսը, տուղտը (կիւլ հաթէմ) և այլն:

Արմտիկներու, խոզան կոշուած ցողնիկները կենդանեաց թէ իրր կեր և թէ իրր անկողին կը գործածուին:

Հիւսարոյանու (վուշ կանեփ) կեղեւը, կերպասներու շինութեան, սնկակաղնի կոշուած ծառին կեղեւը խիցերու պատրաստութեան կը գործածուի:

Շախառնդիկի ցողունէն շաքար կը հանեն: Ինչ ինչ կոնազգիներու արտադրած ռեզինէն բեւեկնի իսկութիւն (essence de térébenthine) կը պատրաստեն:

Վերջապէս, անստի ծառերու ցողունը, ատաղձագործութեան կահագործութեան ևն. փ մէջ կը գործածուի:

**ՏերեւիԸ.** - Տերեւը երկու գլխաւոր մաս կը պարունակէ, կոբուկը, որ տերեւը ցողունին, կամ աւելի յաճախ, ճիւղերուն կը միացնէ, և ծնօքը, որ տերեւին տափակ ու լայն մասն է: Կան և անկոթուն տերեւներ, Ծնօքը կազմուած է ջիղերէ և ուսայնէ: Ծիւղերը ցանցի մը ձեւով տերեւին կճախքը կը ձեւացնեն, այդ ցանցին պարագութիւններն ալ բջջային հիւսուածքով մը լեցո. ած է որու ուսայն անունը կուտան և որ կը պարունակէ կանաչահիթ: Տերեւին տակի երեսին վրայ կը գտնուին փոքր, բազմաթիւ բացուածքներ, որոնց վիստ (stomate) անունը կուտան և մանրադէտով տեսանելի են: Վտանները՝ բոյսին օդին հետ ունեցած յարաբերութիւնները կ'ապահովեն (պատ. 6):

Տերեւի սպաշտները. - Տերեւը երեք պաշտօն ունի. ֆրէսաքափութիւն, շնչոդութիւն և ածխախրացում:

1. Անկազմ աւելին մէջ տերեւ փոխադրուած ջուրի աւելորդ քանակը շոգիի ձեւով տերեւէն դուրս կ'ելլէ: Այս գործողութիւնը կը կոչուի բոյսերու ֆրէսաքափութիւնը: Բոյսերը, ցերեկը մանաւանդ աճառ ատեն շատ կը քրտնաթափին, գիշերը և ձմեռ ատեն քաղղատմամբ նուազ: Ծոգիացած ջուրը բոյսին մէջ պարապ մը կը գոյացնէ, ասիկա խթան մը կ'ըլլայ որ-



պէսզի արմատները հողէն նոր ջուր ծծեն, աւելի վերելքին գլխաւոր պատճառներէն մէկը այս երեւոյթն է:

2. Բոյսերն ալ կենդանիներուն պէս օդին թթուածինը կը ծծեն և բնածխական կազը դուրս կուտան, այսինքն կը ներշնչեն և կ'արտաշնչեն: Բոյսերը գիշեր և ցերեկ, իրենց ամէն մասերով կը շնջեն, բայց շնջողութեան եռանդուն գործունէութիւնը տերեւներուն մէջ է, ուրեմն տերեւը բոյսին թոքն է կրնանք ըսել:






Սկաուտ հայուհիներ  
Armenian Girl Guides

Այն հողերը որոնց մէջ ուէ պատճառով օդը կը պակսի արմատներ շնջանդձ կ'ըլլան:

3. Տերեւը, արեւի լոյսին տակ և կանաչահիւթի ներկայութեան, մթնշորտին մէջ գտնուած բնածխ. թթուութեան կը տարրալուծէ. բնածուխը կ'իւրացնէ և թթուածինը դուրս կուտայ: Այս երեւոյթը կը կոչուի բուսային ածխախրացում: Բուսային ածխախրացումը միայն ցերեկ ատեն տեղի կ'ունենայ: Հիները, այս պաշտօնը կը շփոթէին շնջողութեան հետ: Կ'ըսեն թէ բոյսերը ցերեկ ատեն բնածխակազ կը ներշնչեն և թթուածին կ'արտաշնչեն, իսկ գիշերը ասոր հակառակը: Ցերեկ ատեն բնածխային թթուատին ծծումը շնչառութենէն աւելի զօրաւոր ըլլալու համար, այս վերջինը կը ծածկուի առաջինին սաստկութեան տակ. քանի որ բնածխային թթուատին տարբաշարժութիւնով դուրս բերուած թթուածինը շատ աւելի է քան բոյսին ներշնչած թթուածինը: Իրականին մէջ, այս երկու պաշտօնները իրարմէ բոլորովին անջատ են և տարբեր:

Հօղազէս  
Կ. Պօլիս  
ԿՈՊՈՒՆԻՆ ԽԱՆՏՐՃԵԱՆ



ՍԿԱՈՒՏԱԿԱՆ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԽՄԲԱՌՈՐՈՒՄ  
ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ  
SCOUT'S BIG JAMBOREE  
WORLD RALLY IN LONDON

Յունիս 31էն սկսեալ մինչև Օգոստ. 7, Լոնտոն, Օլիմպիայի մէջ տեղի պիտի ունենայ Սկաուտական միջազգային մեծ խմբաւորում մը: Վերոյիշեալ հանդէսին մասնակցելու համար Չինաստանէն, Ճաբոնէն, Չիլիէն և Արժանթինէն արդէն իսկ սկաուտներ դէպի Անգլիա մեկնած են: Միացեալ Նահանգներու սքաուտները թնդանօթակիրով մը պիտի անցնին ովկիանոսը: Այդ հանդէսին մասնակցելու փառքին պիտի արժանանան քսանը վեց ազգութիւններ ի բաց առեալ անշուշտ հայերը, որ կարծես աշխարհիս ստեղծագործութենէն ասդին կեանքի դառնագոյն օրերը լալու բաժինը ստացած են: Անշուշտ կուգայ օրը, երբ մենք ալ կը փայլինք ազգերու շարքին մէջ, ցորչափ մեր կրակոտ կուրծքերուն տակ կը կրենք ապագային անշէջ յոյսը և կամքի պողպատը:

Աշխարհիս սկաուտներուն թիւը 2 միլիոնի կը հասնի: Կէս միլիոնի չափը Միացեալ Նահանգներու մէջ են և 300,000ը Անգլիոյ մէջ: Միայն Լոնտոնի սկաուտներուն թիւը 40,000 է: Աշխարհիս բոլոր սկաուտները պիտի հաւաքուին,





Պոլսոյ նոյ սկաութներէն մաս մը  
Some of the Armenien Scouts in Constantinople

Զօրավար Պատէն Բաուրի իսկ բառերովը—  
«Աշխարհիս չորս ծագերուն մէջ բարձրացող սերունդներուն միջև եղբայրակցութեան ոգին արծարծելով, ստեղծելու համար այն ոգին, որ հարկաւոր է Ազգերու Դաշնակցութիւնը ապրող ոյժ մը դարձնելու համար:»

Անտարակոյս եղբայրակցութիւնը սկաութական դաւանանքին հիմնական օրէնքներէն մին է և որ հիմնուած է երբեմնի ասպետներու որդեգրած օրէնքներուն վրայ: Աստուծոյ և հայրենիքին հաւատարիմ ըլլալ, պատիւը ա՛լէն բանէ գերադասել, կոչումն էր անցեալի ասպետներուն, որոնց ներկայիս սկաութս անունը կոտանք:

Թէև ոչ սկաութական, և ոչ ալ անցեալի ասպետական օրէնքները կ'արգիլեն որ սկաութական օրէնքներուն հպատակող թշնամի տէրութիւններն ալ մասնակցին այս միջազգային հանդէսին, կեդրոնական տէրութիւններու ներկայ խառնակ վիճակը կ'ստեղծէ շատ մը դժուարութիւններ իրենց ևս մասնակցութիւնը բերելուն մէջ: Այսուհանդերձ, միջազգային պատանեկցութեան վրաններու ներքև համախմբուած կուեննայ իր կենսական ազդեցութիւնը և որ մը երբ սոյնօրինակ հաւաքումները սովո-

րական կը դառնան ամէն երկրի մէջ, այդ փոքրիկներու երակներուն մէջի եղբայրակցութեան սիրոյ հողէն կը ծնի բուն, անշահասէր և իրապէս մարդկային Ազգերու Դաշնակցութիւնը:

Մինչև Յունիսի վերջերը, աշխարհիս չորս կողմէն 100,000ի չափ սկաութներ լոնտոն պիտի հասնին, որոնց վրայ պէտք է աւելցնել Անգլիոյ զանազան մասերէն գալիքները:

Լոնտոնի զանազան սկաութական կեդրոններու մէջ պիտի հիւրասիրուին հարիւրաւոր օտարական սկաութներ. մէկ մասը պիտի ղետեղուի օթեաններու մէջ, սկաութասպետներու հսկողութեան ներքև: Անհատներ ազատ պիտի ըլլան իրենց տուներուն մէջ հիւրասիրելու սկաութներ, անշուշտ իրենց վրայ առնելով ամէն պատասխանատուութիւն: Այս համախմբումին նպատակակէտը եղբայրակցութիւնն է. նաև անոր նպատակն է խումբերու միջև արծարծել եւանդ մը և սկաութական միութեան սկզբունքները լաւագոյն կերպով հասկցնել ուսումնասիրողներու, ծնողքներու, կղերականներու և հասարակութեան մանաւանդ: Այս նպատակով Օլիմպիայի մեծ խաղավայրը սկաութական խաղերու, աշխարհիս սկաութական շամբիոննու-





Իզմիրի հայ սկաուտներին մաս մը  
Some of the Armenian Scouts in Smyrne

Թեան մրցումներու, պարան քաշելու, արգելարչաւններու և Մարաթօնի վազքերու հանդիսավայրը պիտի ըլլայ. նաև տեղի պիտի ունենան ատաղձագործութեան, կօշկակարութեան, խճարարութեան, պարտիզպանութեան ցուցահանդէսներ. կուսամարտութեան և գօտեմարտութեան մրցումներ. նուագածութեան և երգեցողութեան մրցումներ: Ի բաց առեալ ասոնք աշխարհիս սկաուտական շարժումները յատկանշող տեսարաններ պիտի ցուցադրուին և հայերս թերևս կրնանք գէթ մէկ քանի յաջող նկարներով ներկայացնել մեր սկաուտական շարժման զանազան փուլերը: Սկաուտի մը զարգացման մաս կը կազմէ կենդանիներու հանդէպ ազնիւ վերաբերմունք մը ունենալը: Հետևարար ամէն ազգի խումբ իրեն հետ պիտի բերէ իր սիրած և ընտրած մէկ ողջ կենդանին կամ թռչունը և մրցանակ մը պիտի տրուի լաւագոյն ընտրութեան: Յունիս 31ին տեղի կ'ունենայ ընդհանուր սքաուտական անգլը. 500 տղոցմէ բաղկացեալ երգիչ խումբի մը առաջնորդութեամբ: Օգոստոս 1ին Եօրքի Արքեպիսկոպոսը գոհունակութեան պատարագ պիտի մատուցանէ Օլիմպիայի հրապարակը:

Վ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆ

### ԻՄ ՇԵՐՈՍՆԵՐԷՍ ՄԻՆ

Եօրքայրցի տղան եւ անոր արկածախնդրութիւնները. Աւխարհիս բեւեռներուն կրկախոյզը սկաուտի մը նման կը փարի իր գործին:

### ONE OF MY HEROES

Jorkshire Boy and his Adventures. Explorer at the Top and Bottom of the World. Sticking to his Work like a Scout.

Մեր Պոյ սկաուտ հերոսներէն մին ալ նաւապետ Գուզն է. Աւստրալիոյ և Նիու Զէլանտայի երկրախոյզը:

Այս ձեռ աշխարհաշրջիկը, 1728 հոկտեմբեր 27ին ծնած, Եօրքայրի Մէրթըն գիւղէն, գործաւորի մը զաւակն էր:

Փոքրիկն ճէյմս Գուզ գիւղին վարժարանը յաճախեց և մինչև իր 17 տարեկանին հօրը օգնեց ագարակի գործերուն մէջ, յետոյ խնութեան եղաւ: Հոս ծովը սիրեց և վերջապէս նաւաստի ըլլալու առիթը գտաւ:



Սակայն Անգլիոյ արեւելեան եզերքներուն վրայ բանոց փոքր նաւ մըն էր այդ: Տղաքներէն շատերը ծովուն վրայ մէկ քանի շաբաթ պոտերէնէն վերջ իրենց ակնկալածին նման վիպոյին և հաճոյալի չգտնելով, վերստին ցամաքային կեանք մը վարելու կ'սկսին:

Սակայն Ճէյմս Գուզի մէջ ատկէ աւելին կար: Մեծ սկաուտ մը ըլլալ կը փափաքէր: Թէեւ իր կեանքը «փառապանծ» չէր, այլ խեղճ սնունդով և կլիմայի ներքեւ տաժանակիր աշխատութիւն մըն էր, բայց մարդու մը նման փարեցաւ անոր և վերջ ի վերջոյ իր վարձքը ստացաւ, ինչպէս որ մեզմէ շատերը պիտի ստանան, եթէ կարենանք փարիլ մեր ստանձնած գործին: 1755ին H. M. S. Eagle մարտանաւուն մէջ սպայ կարգուեցաւ:

Յետոյ զօրավար Ուրլֆի ներքեւ Գէպէքի պաշարման միջոցին Pembroke նաւուն մէջ ծառայեց: Քարտէս շինելու մէջ, մեր սկաուտներէն շատերուն նման, խիստ ճարտար էր, որով Սէնթ Լորէնս գետին ընթացքը գծելու պաշտօնը ստացաւ: Նա այնքան յաջողապէս գծեց որ, աշխարհիս միւս մասերը զրկուեցաւ քարտէսներ գծելու համար, նմանապէս Անգլիայէն որոշապէս տեսնելը անկարելի եղող կարգ մը աստղերը զննելու համար աշխարհիս միւս կողմը զրկուած արշաւախումբի մը մաս կազմեց:

Պ. Գուզ, իր քարտէսներէն զատ, այնքան լաւ տեղեկագիրներ տուաւ որ ուրիշ ազգեր եւս մեզ նման զանոնք ուրախութեամբ գործածեցին. արդարեւ անոր անունը այնքան լաւ ծանօթ էր օտարներուն որ երբ Ֆրանսա և Անգլիա իրարու դէմ պատերազմ կը մղէին,

Ֆրանսական կառավարութիւնը հրաման տուաւ որ եթէ երբէք իրենց ոյժերուն ձեռքը անցնի Պ. Գուզ, գերիի մը նման չվարուին անոր հետ, որովհետեւ իր երկրախուզութիւններովը այնքան օգտակար ծառայութիւններ մատուցած էր ուրիշ ազգերու:

Ամերիկեան կառավարութիւնն ալ իր զօրախումբերուն նոյն հրամանը տուաւ: Արդէն նա աւելի նկատուեցաւ մարդկութեան պատկանող անձ մը, քան թէ որոշ ցեղի մը: Ընչմարիտ սկաուտ մըն էր «բոյոր աշխարհի» բարեկամ մը ըլլալուն համար:

Իր երկրախուզութիւններէն միուն միջոցին, միայն 300 թոնոնոց փոքր նաւով մը, Պ. Գուզ նոր Զէլանտան և Աւստրալիան գրաւեց, բարձրացնելով անգլիական դրօշակը, յետոյ աւելի հիւսիս գնաց և սառուցեալ մասերուն մէջ օգտակար խուզարկութիւններ ըրաւ:

Իր մարդոց հանդէպ միշտ հոգածու և բարեսիրտ էր: Թէեւ նոր աշխարհներ գտնելով շատ մը մեծ գործեր ըրած էր, իրեն ամէնէն աւելի հպարտութիւն և գոհունակութիւն պատճառող բանը այն էր որ գտած էր եղանակ մը որով կարելի պիտի ըլլար առաջը առնելու իր մարդոց կարգ մը սոսկալի հիւանդութիւններուն, մշտապէս աղածոյ սնունդի տեղ երբեմն թարմ բանջարեղէն և միս տալով:

Մեր ազգային շատ մը հերոսներուն նման կեանքը վերջ գտաւ մինչ իր հայրենիքին հանդէպ իր պարտականութիւնը կը կատարէր: 1779 փետր. 14ին, Սէնտուիչ կղզիները երկրախուզած միջոցին, ընդհանրուն հետ բարեկամանալ փորձելու համար ցամաք ելած էր: Սակայն անոնք նենգամտութեամբ յանկարծ ա-



Կիլիկիոյ հայ սկաուտներէն մաս մը  
A groupe of Armenian Scouts in Cilicie





Եգիպտոսի Հայ սկաութներու ֆանփարի խումբը  
The Brass Band of the Armenian Scouts in Egypt

նոր վրայ յարձակելով ծովեզերքին մօտ սպաննեցին :

Ինչպէս որ միշտ կը կրկնեմ սկաուտներուն և առաջնորդներուն, այս պատմութիւնները չեմ վերյիշեր ինքզինքս զուարճացնելու համար, այլ որովհետեւ որ և է մեծ մարդու մը կամ կնոջ մը կեանքին մէջ, որ և է հայրենասէրի մը մէջ որ իր հայրենիքին կամ աշխարհիս ծառայութեան ընթացքին մեռած է, կայ բան մը որմէ առաւելագոյն կերպով պէտք է ջանանք ընդօրինակել, եթէ երբէք կ'ուզենք զանոնք լաւագոյնս օգտագործել :

Քարգմ.  
Վ. Ս. Փ.

R. BADEN-POWELL  
(The Children's Paper)

### ՍԿԱՈՒՏԸ ԱՆՍՏՈՒՆՆԵՐՈՒ ՀԱՆԴԵՊ SCOUT'S TREATMENT TO ANIMALS

Ե.

Ա. Գանկոը (Matin), որ կը գործածուի ագարակները և մենաւոր տունները պահպանելու համար: Այս տեսակին ամենագեղեցիկն է տանիմարքայի շունը (chien danois):

Բ. Հոլոյի շունը, որ հօտերու պահպանութեան համար ժիր, աշալուրջ ուշիմութեամբ և զարմանալի բնազգով լեզուն է. եթէ լաւ կրթութեամբ չէ հօտերը կառավարելու և պահպանելու տեղ կը վիրաւորէ:

Գ. Քիրժեկն (թաղը), որ կ'որոշուի իր թեթեւութեամբ և արագութեամբ: Նապաստակի հետապնդման համար կը գործածուի. զոր կ'որոշայ աւելի տեսողութեամբ քան թէ հոտառութեամբ:

Դ. գայլաշունը (chien-loup), որ խիստ բնաւորութիւն ունի, բայց քաջասիրտ, գերազանց պահպան և իր տիրոջ բոլորովին կապուած է:

Ե. Ալպեան կամ Ս. Պերնարի շունը (chien des alpes ou chien de Saint-Bernard), որ նոյն լեռան գագաթին վրայ շինուած վանքին կրօնաւորու կողմանէ կը զրկուի մոլորեալ ճամբորդները փնտռելու համար:

Այս հաւատարիմ շունը իր գտած դժբաղդին կը մօտենայ և իր վիզը կրած պաշարները անոր տրամադրութեան տակ կը դնէ: Երբ ճամբորդը ոգևորի և կարենայ քայլել, անոր առաջնորդ կըլայ. եթէ ճամբորդը ուժաթափ եղած





- 1. Գալլաշուն, 2. Մկնուր շուն, 3. Գահապան շուն, 4. Գանգրաներ շուն, 5. Զուլցերիական շուն, 6. Բարակ, 7. Ս. Պեռնարուի շուն, Դամֆո (առանց բիւի Բ. տղի աչ կողմի առաջինը), 9. Եսպանական շուն, 10. Գիւղի շուն, 11. Քերծե (բազր), 12. Լոպուաշուն, 13. Յրաշուն, 14. Ընտանի շուն:

է, մինչև որ կրօնաւորները օտարականին օգնութեան գան, կը հաջէ, և եթէ իր հաջիւնը լսելի չըլլայ, ինք կ'երթայ կրօնաւորներուն Իմացնել:

Զ. Սպանիկ շունը (Espagnol), պերճանքի և զրգարանքի կենդանի մ'է: Շուներուն մէջ կրթութեան ամէնէն աւելի ընդունակն է:

Է. Յածիկ շունը (Basset), որ կը գործածուի նապաստակ և եղընզնարջ (փորսուք) որսալու համար:

Ը. Գանգրանակ շունը (Barbet ou chien caniche), որ ծանօթ է իր ճարպիկութեամբ, հաւատարմութեամբ և իր փրօջ հանդէպ անձնուիրութեամբ: Եւրոպայի մէջ մուրացիկ կոյրերու ընկեր և առաջնորդ եղող շուները այս ցեղին կը վերաբերին:

Թ. Թեր-Նեուվի շունը (chien de terre-neuve), որ շատ լաւ լուզորդ մ'է և զօր կը կրթեն ջրէն դուրս հանելու խղճուելու վտանգին մէջ գանուող անձերը:

Ժ. Սիպերիոյ շունը (chien de Sibérie), զօր կը լծեն բալխիրներու և որ կը կորէ կ'անցնի

մեծ տարածութիւններ անհաւատալի արաթեալ: Բեւեռային գաւառաց բնակիչնե համար շատ թանկագին է:

ԺԱ. Մալրայիկ շունը (Bichon), ս/լ անասուն մ'է որ սենեակներու մէջ կը պա

ԺԲ. կանգառիկ շունը (chien d'arrêt), թանկագին անասուն մ'է դաշտային որսի մար: Հոտառութիւնը շատ զարգացած է և սը զիւրաւ կը գտնէ որուն վրայ աչքերը և կամ և առանց տեղէն շարժելու կը կենայ և չեւ որ որսորդը գայ: Արսորդները այս տեսի շունին թուրքերէն Ծերմակը կ'ըսեն:

ԺԳ. Վազակ շունը (chien courant), ի կը գործածուի նապաստակի, եղջերուի, այծէ մի, վարաղի և գայլի որսերու համար: Կանգր ոսկ շունին շափ հլու և տիրասէր չ'է, և յն ճախ կը լափէ որսը երբ որսորդը ժամանալի հասնի որսը ստնելու համար:

ԺԴ. Տօկ և Պուլտօկ շուները (Dogue Bouldogue), որ սրտատ և բարձրահասակ և առանց վարանման կը յարձակին անասնորսու բազ անասուններու վրայ:

Վերջապէս ըսենք որ կան լաւ և գէշ շուներ, բայց ամենքն ալ գէշ ընողը մարդն հան զօր օրինակ կան շուներ որ խանութներէն գմի դուրսին կ'ընեն, կան ալ որ մաքսանենքու թեան վարժեցուցած են:

Յանցանքը այս խեղճ անասուններունը օգն ալ միայն մարդոցն է որ կը մղեն շուները ալ պիտի ոճրապարտ արարքներու:

(Նար) ՏՕԿԹ. ՄԻՆԱՍ ԱՌԵՏԻՍԵՍ (Անասնաբոյժ գնդապետ)



Սխառները դասախօսութեան պահուն Armenian Scouts Attending a Lecture





Պոլսոյ Միջազգային սկաութսական տղանցիի մէջ հայ սկաութները  
The Armenian Scouts at the Scouts' International Review in Constantinople

### ԳԻՇԵՐԱՅԻՆ ԳՆԱՅՔ

#### NIGHT MARCHIN

Ճերեկուան պէս գիշերն ալ հետազօտիչ սկաութները պէտք է իրենց ճամբան գտնելու կարող ըլլան։ Ձինուորական հետազօտիչները որպէս զի թշնամիէն չի՛նչ ժարուին ընդհանրապէս գիշերն է որ կը ճամբորդեն, իսկ ցերեկին կը քնանան։ Բայց երբ երկար ժամանակեայ փորձառութիւնը կը պակսի ձեր մօտ, այն ատեն գիշերը շատ անգամ կորսուելու վտանգին կ'ենթարկուիք, հեռաւորութեան միջոցը աւելի մեծ կ'երեւի և սահմանները դժուարաւ կը տեսնէք ու կը զանազանէք։ Գիշերը ցերեկէն աւելի վտանգաւոր է արշաւը, եւ ըստ բաղդի և աննպատակ կը քայլենք։ Այս պարագային կը գործածենք ճեղքուած գաւազաններ երբ ստիպուած ենք քարերը խառնշտկելով ճամբան հարթել երբ դուք գիշերային թշնամի մը կը լրտեսէք, ձեր աչքերուն վստահելէ աւելի պէտք է վրստահիք ձեր ականջներուն և ձեր քթին։ Որովհետև հետազօտիչ մը երբ իր հօտառութեան գործարանը լաւագոյն կերպով գործածած է, և ձխախտտի գործածութիւնով զայն չէ խաթարած կրնայ միշտ հեռուէն թշնամիին ներկայութիւնը զգալ։ Գիշերային հետազօտիչներ գիշեր ատեն պէտք է որ աւելի սեղմ շարքերով քայլեն քան ցերեկը, և անտառներու կամ մթին վայրերու մէջ իւրաքանչիւր ոք պարտաւոր է

իր մօտիկ ընկերոջ գաւազանին ծայրէն բռնել։ Հետազօտիչը երբ առանձին է իր գաւազանը մեծ դեր ունի կատարելիք մութին մէջ, իր ճամբան վերագտնելու գործը յաջողցնելու և չոր տերեւները մէկ կողմ քշելու համար։ Գիշեր ատեն առանձին աշխատող հետազօտիչներ երբեմն իրենց խումբին անունը կըող կենդանիին ձայնը կեղծելով իրարու հետ յարաբերութիւն պիտի հաստատեն, այսպէսով թշնամիին կասկածը չպիտի արթնցնեն իրենց վրայ։ Բոլոր հետազօտիչները պէտք է որ աստղերուն ընթացքէն առաջնորդուիլ գիտնան։

#### ԻՆՉՊԷՍ ՊԷՏԻ Է ՃԼՄԻԱՆԻՍ ԳՏՆԵՆՔ

Կարմրամորթ հետազօտիչներու մէջ ուղղեգիւտ (ճամբայ գտնող) անունը ստած են ամէն անոնք, որ անձանօթ երկրի մը մէջ, գիտեն լաւ կերպով առաջնորդուիլ. ատիկայ իրենց համար շատ պատուարեր անուանում մ'է, վստանալի հետազօտիչ մը որ իր ճամբան չը կըրնար գտնել, միջակ աստիճանով օգտակարութիւն մը պիտի ունենայ։

Նորագիր զինուորներէն շատեր մացառնեբու մէջ կորսուած են ու մէկ մ'ալ երեւան չեն ելած, պարզապէս անոր համար որ իրենց պըղտիկ հասակէն հետազօտութեան արհեստին չեն հետեւած ու իրենց չեն սորվեցուցած շուրջերնին լաւ քննելը. ատոնցմէ շատ օրինակներ կարելի է տալ։

Մաղապէլէներու երկրին մէջ, օր մը մարդ





Սկաութս հայունիներ  
Armenian Gril guides



Հայ սկաութները գործի վրայ  
Armenian Scouts at work

մը կառքէն վար իջաւ, քանի մը վայրկեան քալելու, երբ ջորիները կը քակէին ուրիշ ջորիներով փոխանակելու համար: Մացառուտ անտառի մը մէջ հազիւ քանի մը քայլ առաւ, երբ կառքը արդէն մեկնելու պատրաստ վիճակի մէջ դրուած էր կանչեցին զինք ու ամէն տեղ փնտռեցին, բայց ապարդիւն եղու գտնել վերջ ի վերջոյ որովհետեւ ժամանակ անցած էր ու այլևս կարելի չէր սպասել, կառքը ճամբան վիրակաւ, բայց հրաման տուին որ փնտրտուքները շարունակուին:

Ճշմարիտ խուզարկութիւն մ'էր որ կատարուեցաւ մացառուտին մէջ, կարելի եղածին չափ հետեւեցան մարդուն հետքերուն, բայց չարածներ վերջ կարելի եղաւ մարդուն դիակը գտնել, գրեթէ քսան հինգ քիլոմետր հեռի այն տեղէն, ուրկէ առաջին անգամ մարդը աներևոյթ եղած էր և ճամբուն շատ մօտիկը: Յաճախ կը պատահի որ երբ դուք մացառուտի մը կամ նոյն իսկ քաղաքի մը մէջ թափառումներ կուեննաք, անփոյթ կը գտնուիք և չէք ուզեր անդրադառնալ թէ արդեօք ո՞ր ուղղութիւնով կը քալէք որով կը կորսնցնէք զայն շատ անգամ:

Մարդիկ սովոր են յաճախ դէպի աջ ուղղուիլ, սակայն շատ անգամ դէպի աջ քալել կարծած ատեններն շատ հեռի կը գտնուին իրականութենէն. և եթէ արևին և կամ կողմնացոյցին նայելու փոյթ չեն ըրած և կամ ճամբաներու ուղղեցոյց տախտակներու կարեւորութիւն չեն ընծայած, քիչ ժամանակուան մէջ անգիտակցաբար խոշոր շրջանակ մը գծած պիտի ըլլան: Նման պարագաներու մէջ, նորագիր մը երբ ընկերներէն յանկարծ հեռացած գտնուի ու միայնակ գտնէ ինքզինքը անտառին մէջ,

ընդհանրապէս իր գլուխը կը կորսնցնէ, կը շրփոթի ու կ'սկսի վազել այն ատեն՝ երբ աւելի պէտք է իր պաղարիւնութիւնը պահել և հաստատապէս վճռել իր ձեռք առնելիք օգտակար գործը, ետ դառնալ կամ եթէ կարելիութիւն չ'կայ, փայտ փնտռել վառելու համար. որպէսզի անոնք որոնք ձեզ կը փնտռեն, օգնութեան փութան: Բայց ամէնէն լաւագոյն բանն է չը կորսուիլը:

Վարժ հետազօտիչ մը, առաւօտուն դեռ չը մեկնած, պէտք է ուշադրութիւն դարձնէ հովին փշած ուղղութեան: Եթէ կ'ուզէք միայնակ պտոյտ մը կատարել և կամ իբր պահակ շրջագայել, պէտք է նախ կողմնացոյցի մը միջոցով ապահովէք այդ ուղղութիւնը, որուն պիտի հետեւիք. նոյնպէս հասկնաք թէ հովը ո՞ւրկէ կու գայ, ատիկա ձեզի շատ պիտի օգնէ ձեր ուղղութիւնը պահելու, մանաւանդ երբ կողմնացոյց չունիք և երկնքի վրայ արեւը չի փայլիր. վերջապէս պէտք է այնպիսի աչքառու կէտ մը ուրկէ կարելի ըլլայ դիւրաւ գտնել ձեր ճամբան. և այս նպատակին հասնելու համար բաւական է ընտրել այսինչ ըլլուրը, այնինչ աշտարակը, զանգակատունը, յատկանշական ծառեր, քարաժայներ, պզտիկ լեռներ, կամուրջներ, կարճ խօսքով, այն ամէն իրերը որոնք ձեզի թոյլ կու տան վերագտնել ձեր ճամբան և կամ տալ այն ծանօթութիւնը անոնց՝ որոնք ձեզմէ վերջ պիտի փափաքէին միևնոյն ճամբուն հետեւիլ:

Երբ աչքառու կէտերը խնամոտ կերպով նշանակուին, դիւրին պիտի ըլլայ ճամբանիդ գտնել ետ դառնալու ատեն. բայց անոնցմէ հեռանալու ատեն իսկ, քանի մը նանգամ պէտք է ետ դառնալ նայիլ, որպէսզի զանոնք լաւ ճանչ-



նաք, այս անգամ հակառակ կողմէն եկած ատեննիդ .

Այս խորհուրդին պէտք է լաւ ուշադրութիւն դարձնէք, երբ մանաւանդ անձանօթ քաղաքի մը մէջ է որ կը գտնուիք, և կամ երբ չոգեկառքով հոն կը հասնիք ու քաղաք մտնելու համար կայարանը կը թողուք . պէտք է արեւին դիրքը և ծուխին առած ուղղութիւնը որոշել :

Իբր նշանակէտ ընտրեցէք, յիշատակարանները, եկեղեցիները, գործարաններու ծխնելոյզները, փողոցներու կամ վաճառատուններու անունները, որպէսզի դիրաւ կարենաք վերադառնալ և կայարանը գտնէք առանց դժուարութեան, և ասիկա շատ դիւրին բան մ'է մանաւանդ երբ քիչ մը վարժութիւն ունիք . և սակայն շատեր իրենց ճամբան կը կորսնցնեն երբ անձանօթ քաղաքի մը փողոցներու անկիւններէն մէկը գտնել կ'ուզեն :

Հովը փշած ատեն երբ կ'ուզեք անոր ուղղութիւնը հասկնալ, պէտք է քանի մը չոր խառիչիւղեր նետել օդին մէջ կամ բուռ մը նուրբ փոշի արձակել և կամ բթամաթը ծծել, այնպէս որ հազիւ թրջի և խոնաւութիւն մը առնէ և ձգել որ հովը վրան փչէ, մատի աւելի պաղ ազգացած կողմը ձեզի պիտի ըսէ թէ հովը ուրիշ կու գայ :


Եթէ արշաւախումբի մը իբր հետազօտիչ կամ յառաջապահ կը ծառայէք, պէտք է խումբին գլուխը անցնիք և ձեր ամբողջ ուշադրութիւնը կեդրոնացնէք ձեր ըրածին, որովհետեւ շատ տկար նշանակներու վստահելով է որ պիտի քայլեք . և եթէ խօսքով և կամ ուրիշ բանով մը զբաղուիք չը պիտի կարենաք որոշակի ձեր միտքը պահել զայն :

Տարէց և վարժ հետազօտիչներ ընդհանրապէս յուռ են ու անխօս, որովհետեւ անոնք սովորութիւն ըրած են ամբողջ ուշադրութիւնով իրենց ընելիքին հետեւիլ :

Շատ անգամ նորագիր սկաստներ եղած են, որոնք իրենց առաջին արշաւին իսկ, հետազօտիչը կամ պետը առանձին գտնելով, մօտեցած են անոր, քովիկէն քայլած ու խօսակցութեան բռնուած են, մինչեւ որ պետը ստիպուած է այս կամ այն եղանակով հասուցնել իրեն իր ուշադրութիւնով լարուած վիճակ :

Դուք հանդիպած էք չոգենաւերու մէջ, ազգի տախտակներու որոնց վրայ գրուած է «Առաւստիներուն հետ խօսակցիչը արգիւտած է» . ճիշտ նոյն կարգախօսը կը պատշաճի խումբը առաջնորդող հետազօտիչին համար :

Քարգմ. Դ. ՎԱՐԴԵՐԵՍԵԱՆ




Սկսուիչ արհեստագործ  
The Scout as Craftsman





Հայ սկաութսական բանակում  
*Armenian Scouts' at Camping*



Հայ սկաութսները լողանալի պահում  
*Armenian Scouts taking their Sea-Bath*





Այսուր սևասուններու հանդէպ  
Scouts' behaviour towards the animals

ԻՆՉՊԷՍ ՊԵՏՔ Է ԴՈՐԾԵԼ ԼՐԴԵՆԻ ՄԸ  
ՍԿԶԲՆԱԿՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿՆԱԿ

Շատեր հրդեհի մը սկզբնաւորութեան ժամանակ կատարուելիք գործողութեանց վրայ տարտամ գաղափարներուն, սակայն, որոշ գաղափարի մը չգոյութեան պատճառաւ կը շուարին և նոյնիսկ այնպիսի բաներ կը կատարեն որոնք կը սատարեն հրդեհին տարածման:

Վստահ մի ըլլաք որ առանձին կրնաք մտրել տարածուելու վրայ եղող կրակ մը, որքան ալ փոքր տարածութեան վրայ լլայան, առաջին պարտականութիւնն ինչ է օգնութիւն կանչել:

Մի խորտակէք դուռները և կամ պատուհանները հրդեհի մը սկզբնաւորութեան ատեն և կամ բաց մի թողուք զանոնք, ջրհանկիրներուն օգնութեան հասնելն առաջ: Որքան որ կարելի է բաց օդը հեռու պահեցէք կրակէն:

Եթէ գիշեր ժամանակ կրակ պատահէ, ա՛մ միջապէս արթնցուցէք ամէնքը որ կը գտնուին այդ շէնքին մէջ, և երբ կ'ուզէք կենդանիները ազատել կրակէն. պէտք է աչքերնին կապել լաթերով, որպէսզի չի տեսնան ծաւալող բոցերը:

Երանելոյզի մը կրակ առնելու պարագային աղ նետելու է անոր մէջ և յետոյ վրայէն թաց վերձակով գոցելու է ծխնելոյզին բերանը, օդի հոսանքը. դարբեցնելու համար:

Ինչպէս գիտէք ամէն հրդեհի փոքր տարածութեան մը վրայ կ'սկսի ու երթալով կը լայնայ, ուստի պէտք է պազարին ըլլալ ու արագ գործել, իսկ եթէ գործող

անձին հագուստը կրակ առնէ և սենեակին մէջ օգնող չի գտնուի. գետին պակիլ ու գլտորիլ ամենակարուկ ճամբան է մարմինը ազատելու:

Եթէ կանթեղ մը շրջած է և բոցերը երթալով կը տարածուին, մոխիր, աւազ, հող և կամ ալիւր նետելու է առաջը առնելու համար բոցերուն տարածման: Բայց պզտիկ տարածութեան վրայ եղող օճնկած հեղուկներու համար ամենալաւ միջոցն է գորգով գոցել բռնկած տեղը:


ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԱԵԱՆ ՄԻՋՈՅՆԵՐ. — Եթէ հրդեհի մը ժամանակ շրջապատուած ես մուխով, թրջէ թաշկինակդ և կամ սրբիչ մը և երեսիդ վրայ տարածէ, այսպէսով կրնաս ազատօրէն շնչել:

Եթէ հրդեհը տարածուի ու փայտուտի ամէն ճամբայ կտրուի, ուղղակի տանիքը դիմէ ուրիշ կրնաս ցարակից տանիքը անց իլ:

Անխոհեմ ընթացք մըն է շուտ մը հանդիպած պատուհանն վար ցատկել, այս միջոցը ձեր ամենավերջին ապաւէնը պէտք է ըլլայ. իսկ երբ ստիպուած էք ցատկել, առաջնընէ վար նետեցէք անկողինի կազմուածքներ և գոյգեր ու յետոյ անոնց վրայ ցատկեցէք:

Ձուանը կրնայ գործածուիլ իբր ազատումի միջոց, բայց անոնք որ տկար են, և կամ չեն դիտեր ինչպէս պէտք է գործածել զայն աւելի աղէկ մէկ կողմ ձգեն: Բայց եթէ այս միջոցը գործածուի, պէտք չէ սահիլ չուանին վրայէն, որքան ատեն որ ուժերնիդ կը ներք պէտք է բռնելով իջնալ:

Մ. Բ.







Հայ սկաուտական բանակում  
Armenian Scouts' at Camping

**ԳՆԴ. ՄԱՔՍՈՒԷԼ ԵՒ ՊՕԼՍՈՅ ՍԿՈՒՏՆԵՐԸ**

20 Յունիս 920 Միջազգային ընդհանուր սկաուտական տղանցքի առթիւ Հայ Մարմնակերպական Ընդհ, Միութեան կեդր. Վարչութիւնը՝ պոլսոյ սկաուտական միջազգային յանձնաժողովի Բարսուղարութեան միջոցաւ՝ հետեւեալ գրութիւնը ստացած է պոլսոյ միջազգային ստիկանութեան պէտք եւ պոյ սկաուտներու միջազգային կազմակերպութեան նախագահ գեղ Մաքսուէլէ

Սիրելի սկաուտներ Կ. Պոլսոյ

Իբրեւ ձեր նախագահը, կ'ուզեմ յայտնել ձեզ ամենուր ըլլաք խմբապետ, առաջնորդ թէ պարզ սկաուտ, ինչ աստիճանի որ պատկանիք, ամեն տղու առանց բացառութեան իմ խորին գոհունակութիւնն այն կարգուսարքին համար՝ որով տեղի ունեցաւ ձեր տողանցքը անցեալ կիրակի 20 Յունիս 1920.

Թէ Զօրավար Ռւիլսըն եւ թէ ես պիտի փափարէինք անշուշտ իւրաքան իւր սկաուտի ուղղել ձեր խօսքը բայց, ինչպէս կ'ըմբռնեք, ժամանակը թոյլատու չէր այդ բանին.

Մինչ ձեր շարքերուն առջեւէն կ'անցնիք քանի քանի անգամներ փորձեցայ զատել այս կամ այն պայ ծառ աչուի եւ վառվռուն սկաուտը, եւ մինչեւ վերջ, տղայ զէմքերը դիտելով հաճոյքով կը նշմարէին հոն ցոլացումը մայուր եւ առողջարար սկաուտական կեանքի մը.

Բոլորդ ալ սկաուտական օրէնքին համաձայն ճշմարիտ սկաուտի կարգապահութիւնը ցոյց տուիք, եւ երբ խուռն բազմութեան խանդավառութիւնը տեսար, ձեզմէ իւրաքանչիւրը զլաց թէ որքան գովելի է սկաուտներուն կատարեալ կարգապահութեան տիրացած ըլլալը, որով կրցաք թաքսիմի մարգավայրին վրայ այդքան հոյակապ տեսարան մը ներկայացնել:

Տողանցքը մեծ գոհունակութիւն պատճառեց Զօրավար Սըր Հէնրի Ռւիլսընի, որ բարեհաճեցաւ սկաուտական բարեւը առնել. Ի տես այդ բանին՝ զլացի թէ իւրաքանչիւր սկաուտ որքան մեծ պատիւ մը կը բերեր ինծի՝ իմ նախագահի հանգամանքիս մէջ.

Շնորհակալութիւն կը յայտնեմ ամէնուն ալ յանուն Զօրավար Ռւիլսընի ու Տիլնոջ, եւ նաեւ իմ անունովս, այն փառաւոր «հուրբառներուն համար որոնցմով տղանցքի մեզ՝ ձեր գլխարկները զաւազաններնուդ վրայ բարձրացնելով:

Իմ կեանքիս ամէնէն յիշատակելի եւ հետաքրքրական օրերէն մէկը պիտի նկատեմ այն օրը երբ իմ պոյսկաուտներս ներկայացուցան ինծի:

**Զուրգ ալ կեզձօրէն  
Ժ. ԲԱՍԷԼ ՄԱՔՍՈՒԷԼ**



Մասնաճիւղի բանակումի պահուել խոհարարի պաշտօն կատարող փոխ-խմբապետ Պ. Արշաւազը եւ առաջնորդ Պ. Ենույի  
Patrol Leaders Serving as Cooks



The Armenian scouts' Head Quarters has received with thanks the following, signed by the Honourable President of the Constantinople International Scouts' Committee, Colonel G. Cassel Maxwell.

DEAR BOY SCOUTS OF CONSTANTINOPLE

As Your President, I desire to express to you all; whether Scout Master, Troop Leader, patrol Leader, of whatever grade you may be; to every boy without exception my deep satisfaction at the manner in which you turned out and behaved on Sunday last, June 20, 1920.

Both General Wilson and myself would have liked



Հայ սկաւտները ճաշի վրայ  
Armenian Scouts at dinner


came for a time so unrestrained, every boy must have felt what a good thing it was that perfect discipline reigned among the Scouts, making it possible to produce a grand spectacle on the Taxim Field.

The March Past gave General Sir Henry Wilson, who so kindly took the salute, great satisfaction, which perceiving, I felt how every boy was gaining me honour at being president.

I thank everyone in the name of the General of Lady Wilson, and for myself for the magnificent Hurrahs with hats on poles.

I shall regard the introduction of my boy scouts to myself as one of the most interesting and memorable days of my life.

Yours sincerely  
(Signed) G. CASSEL MAXWELL



Տեղագրական ֆորսկու մը գծուած I Մասնա  
ճիւղի Ահլոր Խմբակի անաչնորդիս կողմէ  
A topographical Nap Drawn by an  
armenian patrol leader

to have lingered and spoken with every boy, but of course all will understand that time did not permit.

As we passed along the ranks I was tempted time after time to single out some clean looking smart scout, and all the while, looking in the boys faces, I felt the highest sense of pleasure at beholding the reflection of pure, healthy, and good scout lives.

The discipline of all was that of true scouts according to the Scout Law, and when the great crowd be-




Սկաւտը սկաւտներու բարեկամ է  
The Scout is Friendly towards the  
animals





Հայ-Սկաուտներու արշաւի մագրի-ֆիւլ-Հայքալ

Մասնաճիւղ	Ինչպե՞ս կամ պարտաւանայ	Դեր ինչպե՞ս	Վարձ	Սպասարկ	Գն	Զին	Զարկ
Միջին խումբ	Բերա	Արշաւային 1 Անաղնուր	0	6	35	0	62
	Գարբ-Գիւլ	Նաւարկան 2	4. Սառսեան 1	5	13	0	18
	Ս. Սրկան	Գ. Ինժեան 1 (Գ. Ինժեան)	0	1	8	0	10
	Նոր Գարբ	Ս. Գարբան 1 Անաղնուր	0	3	27	1	32
	Պէշկիթալ	Նոր Գ. Ինժեան 1 Անաղնուր	1	0	2	0	4
Ներքին խումբ	Բարձր	Բարձր Թրքան 1 (Անաղնուր)	0	0	0	3	4
	Գամ-Գաթու	Գ. Գանուր 1 Անաղնուր	6. Սելման 1	4	32	2	42
	Պալար	Մ. Գանուր 1	0	1	12	0	14
	Մամար	Ս. Գանուր 1	0	5	36	0	42
Մագրի-ֆիւլ	Ս. Աղնուր 1	Ս. Արաղնուր 1	3	25	0	30	
		10	6	26	192	6	240



Հայ սկաուտներու արշաւի շուրջակ մը  
Armenian Scouts' Scouting Programme

Հայ սկաուտներու արշաւի քարտէս մը  
Armenian Scouts' Scouting Map

**\* ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ \***

Միտ թեանս Սկիւտարի եռանդուն անդամ. նեկէն եւ թերթիս աշխատակից Տօրթ. Մ. ՈՒ ԶՈՒՆՆԱՆԻ օրիորդ ՄԱՌԿՐԻԹ ԱԻՅՏԻՍԵԱՆԻ հետ նշանախօսութեան առիթով Հ. Մ. Ը. Մ. Կեղրոնի վարչութիւնը և Խմբագրութիւնս ի իրենց խնդակցութիւնը կը յայտնեն երջանկութեան բաղձանքով:

\* Նոյնպէս Միտ թեանս Բերայի մասնաճիւղին նախկին խմբագրատ Գ. ՍԱՐԳՍԻ ՍԻՄՈՆԵԱՆԻ ՕՐ. ՆՈՒԱՐԻ ԻԻԹԻԻԾԵԱՆԻ հետ ամուսնութեան առիթով մեր լաւագոյն բաղձանք ներք իրենց տեսական երջանկութեան համար:

Նշանաշարի յիշ Եունիս 24ին կէսօրէ ետք պատահած հրդեհին զոհ գնահ նոր Դպրոցը — Հ. Մ. Ը. Մ. 18րդ մասնաճիւղ — մեր անկեղծ ցաւակցութիւնը Միտ թեանս նախկին ատենապետ Գ. Յովհ. Հինգիւանի, իր ընկերոջ Գ.

Մալաթեանի և մեր սոյն մասնաճիւղի բոլոր անդամներուն:

Կը յուսանք որ սոյն զժբաղգում թիւնը շուտով կը դարձանուի հիմնադրներու կամքին և վարժարանին համակիրներ սոյն հիմնարկութիւնը վերաբացած տեսնելու փափագին առջև:

Մաքրիգիւղի յիշ Եունիս 4ին տեղի ունեցաւ յուղարկաւորութիւնը Գ. Անդրանիկ Մարտեանի: Թիշեալը 17 տարեկան Տիվրիկցի էր և տարագրութենէ վերադարձած կը գտնուէր Պէշկաղեան վարժարան և այդ վարժարանի սկսուած առաջնորդներէն էր:

Եղարկաւորութիւնը բաւական սրտառուչ եղաւ: Սկսուածները կը հետեւին դադաղին, մինչև գերեզման ուսարարձ տարին դադաղը:

Կեղրոնի վարչութիւնը և Խմբագրութիւնս իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն Պէշկաղեան վարժարանի անօրէնութեան և Հ. Մ. Ը. Մ. Մաքրիգիւղի մասնաճիւղին:





Սկսուէր շինող է  
The scout is a Builder

ԽՄԲԵՂԳՐԱՏՈՒՆԷՆ

Ներկայ թիւը նուիրուած է Լոնտոնի Միջալգային սկաուտական «Ճէմպրի»ի (խմբաւորում) Սոյն թիւին նկարներուն համար անձ նուէր կերպով աշխատած է Հ. Մ. Ը. Մ. Ի ժրջան լուսանկարիչը Պ. Լեւոն Չերազ, որ ու է ջանք չը խնայեր հայ սկաուտական շարժումը իր այլազան ձեւերուն մէջ ներկայացնելու համար: Նոյնպէս Պ. Վահրամ Փափազեան, թերթիս համակրելի աշխատակիցը, թարգմանութիւններու հոգը վրան առնելէ զատ մասնաւոր գրութիւններով ալ անկեղծ ներկայ թիւին համար: Մեր անկեղծ շնորհակալութիւնները իրենց:

Ներկայ թիւէն քիչ քանակութեամբ լուսագոյն թուղթի վրայ տպուած է որ շատ գեղեցիկ հաւաքածոյ մըն է, գինը բացառապէս 25 դր. է:

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՇՈՐՃՈՒՄ

20 Յունիս 920ին Թագսիմի մարզարանին մէջ տեղի ունեցած միջազգային սկաուտական տողանցքը, նկարներով միասին, և 11 յուլիսին տեղի ունեցած հայ սկաուտական պաշարողական փոյձի մասին, մասնագիտորէն պիտի գրենք յաջորդ թիւով:

NOTICE - The Head Office of the Armenian Scouts' Organization is provisionally in Constantinople, Rassim Pacha Han, No 23. Therefore all correspondences should be sent to the above address, till Armenia's boundaries are finally settled.

OUR SCOUTS' HATS

At the finish of the General War as Scouts' spacial hats were not available in here, we had to furnish local white hats, which at the same time, costed us little. Presently these white hats are not all replaced by Scouts' regular hats, because they cost us too dear, and, moreover, we are met with great difficulties in obtaining them from Europe or elsewhere.



Սկսուէր շինող է  
The Scout is a Builder



# Հ. Մ. Բ. Մ. ՍԿԻՆՍԿԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

Կ. Պոլիս 23 յունիս 920

Յանձնախումբս իր Բ. նիստին — որ տեղի ունեցաւ 22/6/20 Գշ. օր — կազմեց իր դիւանը այսպէս, Պրլք. Հայկ ձիգմէճեան՝ վարչական և բարոյական, Գրիգոր Յակոբեան՝ մարզական եւ Արշակ Յակոբեան դիւանական աշխատութեանց բաժնիները վերցուցին:

Յանձնախումբս իր միեւնոյն նիստին մէջ սկսուտական կազմակերպութեան հարցը երկար քննութենէ մը անցնելով առ այժմ որոշեց միայն նետեւեալները:

ա. Սկսուտական խումբերը հինգ խմբակէ «ւեի» չեն կրնար պարունակել: Այն պարագային որ մասնաձեւը մը հինգ խմբակէ աւելի սկսուտ ունի կրնայ սկսուտական երկու խումբեր կամ էլ աւելի ունենալ. նմանապէս մասնաձեւը մը կրնայ մէկէ աւելի խումբեր ունենալ երբ այս բանը արդարացնող պատճառներ կան, ինչպէս, գիշերօթիկ վարժարան մը, որ բանոց մը եւայլն բոնց տղաքը տեսակ մը միութիւն կը կազմեն արդէն. յամենայն դէպս այս պարագան կեդր. վարչութիւնը միայն իրաւասու է որոշելու և ոչ թէ մասնաձեւը:

բ. Սոյն սկսուտական խումբերը կ'ունենան անջատ սկսուտական խորհուրդներ, կազմուած խումբին տասնապետներէն և փոխ-խմբապետներէն և որոնց կը նախագահէ խմբապետը, այս մասնաձեւերուն մէջ որ, մէկէ աւելի խումբեր կան պէտք է ըլլայ ընդհ. քննիչ խմբապետ մը որ տեղւոյն վարչութեան մաս պէտք է կազմէ: Քննիչ խմբապետը իրաւունք ունի դիտողութիւններ և թելադրութիւններ ընելու խմբապետներուն և այս վերջինները պարտաւոր են անոր անսալու:

Այս հաստուածին տրամադրութեան համաձայն գոթութիւն ունեցող սկսուտական խորհուրդին գործն է կազմակերպել խումբը, զբաղել անոր մասնագիտական (թէքնիք) գործերով, այս մասին կեդր. Յանձնախումբին կողմէ գալիք հրահանգներուն կիրարկումը ապահովել և կիրարկման եղանակը որոշել, կազմակերպել արշաւներ եւ դասախօսութիւններ, պատրաստել տեղեկագրեր եւայլն: Այս խորհուրդը խումբին պատուոյ աստիճանը եւս կը կազմէ. այս ժողովին որոշումները որոնք տեղական հանգամանք ունին, ինչպէս արշաւներ կազմակերպել սկսուտի մը արարքներուն մասին վճիռ տալ եւայլն, պէտք է վաւերացուի տեղւոյն վարչութենէն: Սկսուտական խորհուրդի մէջ վէթօի իրաւունք ունի խմբապետը, որ կ'ստորագրէ բոլոր հրահանգները և տեղեկագրերը, այս մասնաձեւերուն մէջ ուր քննիչ խմբապետ գոյութիւն ունի, այս վերջինը պէտք է տեսագրէ (viser) վերագրեալ թուղթերը:

գ. Սկսուտական մօտիկ խումբեր կը կազմեն շրջան մը, այսպէս հին Պոլիսը որ կը պարունակէ առ այժմ Պալատ, Գուճաբու, Սամաթիա, Մագրգիւղ և Սանսթեֆանօի մասնաձեւերը կը կազմէ մէկ շրջան, Բերան և Վոսփորի Եւրոպ. ափունքը որոնք ունին խառնուրդ Բերան-Շիշի, Պէշիկթաշ, Օրթագիւղ, Վոսփոր, Պալատիման մասնաձեւերը կը կազմեն երկրորդ շրջան մը և Վոսփորի ասիականափունքն ու իշխանաց կղզիները որոնց մէջ

կ'իյնան Սկիւտար, Գատըգիւղ եւ Հայ կղզի մասնաձեւերը կ'ըլլան երկրորդ շրջան մը: Այս երեք շրջաններուն համար կեդրոնի յանձնախումբին կողմէ այցելութիւններ պիտի կարգուին որոնց պաշտօնի տեւադրութիւնը նախապէս մահմանուած պիտի ըլլայ, այս վերջինները իրենց դիտողութիւնները պիտի կրնան ընել մասնաձեւերու ընդհ. խմբապետներու և անոնց բացակայութեան պարագային խումբերու խմբապետներուն, և անկէ դատ պիտի տան իրենց տեղեկագրերը կեդր. Սկ. Յանձնախումբին:

դ. Որոշուեցաւ բոլոր մասնաձեւերէն ուզել այսօրուան իրախան սկսուտներուն ցանկը, իրենց աստիճաններով, տարիքով եւ քանի տարուան սկսուտ եւ ի հարկին քանի տարուան տասնապետ, ըլլալուն յիշատակութեամբ, նաև եթէ տեղի կայ, խմբակներու բաժանումով:

ե. Յետ այսու, տասնապետի, փոխ-խմբապետի աստիճաններն ու պաշտօնները պիտի անջատուին: Այսպէս սկսուտ մը իր որոշ կարողութեանց համեմատ պիտի կըրնայ տասնապետի, փոխ խմբապետի եւ խմբապետի աստիճանները ստանալ, առանց սակայն անպատճառ համահաւասար պայտօններ ունենալու, ասոնք պիտի նկատուին անպաշտօն տասնապետ եւայլն և ի հարկին միայն, երբ պաշտօններու մէջ պակաս յառաջ գայ և կամ որիչ տեղ մը պէտքը զգալի ըլլալ, պաշտօնի պիտի կոչուին:

Ասոնցմէ զատ սկսուտական գիտելիքներ գործնականօրէն սովորեցնել, վաժեցնել եւ կիրարկել տալու համար յանձնախումբս պիտի կազմակերպէ յաջորդական սկսուտական ընդհ. արշաւներ: Արշաւին նիւթը պիտի ըլլայ յիպատ բանակահողի մը հաստեղ, իւրաքանչիւր խումբ պիտի կազմէ բանակատեղի մը որոշուած շրջանակի մը մէջ իր յարմար դատած տեղը. պիտի քննուին բանակատեղիին դիրքը, վրաններու կանգնումը, խոհանոցի և արտաքնոցի հաստատումը, պահակներու բաշխումը, կրակ վառելու և կերակուր եփելու գործողութիւնը, ջուր հայթայթելու եւ կարմիր խաչի սպասարկութեան միջոցները, ինչպէս նաև բանակատեղին հաւանական թշնամիի մը յորձակման դէմ պաշտպանելու համար ձեռք առնուած միջոցները, նկատի պիտի առնուին նաև սոյն գործողութեանց արագութիւնը և կանոնաւորութիւնը ինչպէս եւ խումբին կարգապահութիւնը:

## Ի դիմաց սկսուտական յանձնախումբի ԱՐՇԱՎ ԵՎ ԿԵՆՏՐՈՆ

Հ. Մ. Բ. Մ. Սկիւտարի, Հայ կղզիի և Գատըգիւղի մասնաձեւերային ողիմպիական խաղերը տեղի կունենան կիրակի 25 յունիս 920 կէս օրէ վերջ ժամը 3ին, սկիւտարի Հ. Մ. Բ. Մ. մարզարանին մէջ:

Սկսուտ հայտհաններն ալ կը մասնակցին սոյն խաղերուն:

Շատ գեղեցիկ վայելք մը պիտի ըլլան սոյն խաղի հասարակութեան համար:

Մուտք 50 և 30 դրոշ:

Հ. Մ. Բ. Մ. Վարչութիւն



# ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ



2. Մ. Ը. Մ.ի Աթլէթիկ Յանձնախումբս իր յաջորդական զուգարու մներուն միջոցին տուած հետեւեալ որոշումներուն մասին 2. Մ. Ը. Մ.ի մասնաճիւղերուն եւ հայ Մարմն. Միութիւններուն ուշադրու թիւեր կր հրաւիրէ.

1.—Ողիմպիական խաղերու իբր թուական որոշուած է Սեպ. 5ի կիրակի օրը, Մրցումները կ'սկսին ժամը 2ին.

2.—Ողիմպիականը պիտի բլլայ բնդհ. հայկական Ողիմպիական, նախաձեռնութեամբ 2. Մ. Ը. Մ.ի կեդրոնական վարչութեան. Իբր չափանիշ (record) պիտի նրկատուին անցեալի բնդհ. հայկական Ողիմպիականներու մէջ շահուած չափանիշերն.

3.— Յանձնախումբս կոչ կ'ընէ 2 Մ. Ը. Մ.ի թէ Պօլսոյ թէ գաւառի եւ թէ արտասահմանի մասնաճիւղերուն, ինչպէս նաեւ բոլոր հայ մարմնամարզական միութիւններուն որ պատրաստուին սոյն մրցումներուն, տրբուած հրահանգներուն եւ տրամադրութիւններուն համեմատ, Մրցումներուն տեսակը անփոփոխ կր մնայ.

4.— Մինչեւ Սոգոստ 15 2. Մ. Ը. Մ.ի բոլոր մասնաճիւղերը, ինչպէս նաեւ հայ մարմնամարզական միութիւնները պարտին կատարել ներքին մրցումներ. նմրկայութեամբ 2. Մ. Ը. Մ.ի աթլէթիկ յանձնախումբի անդամներուն. Ամէն մասնաճիւղ եւ մարմն միութիւն պարտին կեդրոնին ժամանակին իմացնել մշցման թուականը եւ վայրը, Ընդհ. Ողիմպիականի մրցորդները այս փորձ-մրցումներէն բնորոշնուն պատճառաւ, առանց կեդրոնի յանձնախումբի վաւերացման, չափանիշերն օրինաւոր չեն նկատուիր եւ մրցորդներուն բնդհ. ողիմպիականներուն մասնակցելու իրաւունք չի տրուիր.

5.—Իւրաքանչիւր մարզիկ երեք մրցումներէ աւելին չի կրնար մասնակցիլ.

6.— Իւրաքանչիւր մարզիկ պէտք է յանձնախումբիս ներկայացնէ իր պատկանած միութեան բժիշկին կողմէ տրուած, մրցումներու մասնակցութեան առողջապահական վկայագիր մը.

7 — Գեղորոնիս մասնաճիւղերուն միացեալ փորձ-մրցումները չորս շրջանակներու բաժնուած են, որոնց թուականը կ'որոշեն շրջանակները կազմող մասնաճիւղերը.

Ա. Շրջանակ. — Ասիական եզերքներու եւ Բթթիի 2. Մ. Ը Մ.ի մասնաճիւղերուն մրցումները տեղի կ'ունենան Իսկիւտարի 2. Մ. Ը. Մ.ի մարզավայրին մէջ.

Բ. Շրջանակ. — Վոսփորի 2. Մ. Ը Մ.ի բոլոր մասնաճիւղերը Պէպէքի 2. Մ. Ը. Մ.ի մարզավայրին մէջ.

Գ. Շրջանակ. — Բերա Շիշի մասնաճիւղ, իր սեփական մարզավայրին մէջ.

Դ. Շրջանակ. — Խազիւղի, Պալաթի, Գում Գաբուի, Եէնի գաբուի, Սամաթիոյ, Մազրգիւղի եւ Սան-Սթէֆանոյի 2. Մ. Ը. Մ.ի մասնաճիւղերը իրենց յարմար դատած մարզավայրին մէջ.

8. — Իւրաքանչիւրը մրցող, առանց բացառութեան, պարտի կրել ձերմակ տափատ եւ շապիկ, ինչպէս նաեւ

կուրծին վրայ պէտք է կրէ 2. Մ. Ը. Մ.ի նշանակր, իր պատկանած մասնաճիւղին սկզբնատուներովը կ'կամ իր պատկանած մարմն. միութեան անունը եւ նշանակը՝ եթէ ունի.

9. — 2. Մ. Ը. Մ.ի մասնաճիւղերու եւ հայ մարմն. միութիւններու միջեւ տեղի ունենալիք սովորական 400 մէթր զոշարշաւէ գատ, մարզանքը հայ մտաւոր եւ աշխատաւոր դասակարգին միջեւ եւս տարածելու եւ քաջախիբելու նպատակով յանձնախումբս յարմար դատած է այս տարի իբր յաւելուածական մրցում ունենալ առեւտրականներու, մտաւորականներու եւ արհեստաւորներու զոշարշաւ մը. Յանձնախումբս ներկայովս կոչ կ'ընէ առեւտրականներուն, ոսկերիիներուն, կոշկակարներուն, խմբագիրներուն, տպարանական բանուորներուն, ուսուցիչներուն եւ տարրեր հայ արհեստաւորներուն որ իրենցմէ 25 տարեկանէ վեր չորս արագավազ ներայացուցիչներ բնորոշելով, մինչեւ օգոս. 15 2. Մ. Ը. Մ.ի կեդրոնի աթլէթիկ յանձնախումբիս տեղեկացնեն. Իւրաքանչիւր անդամ միայն 100 մէթր պիտի վազէ.

10. Մրցորդներու աւելորդ խճողումի տեղի չտալու համար, յանձնախումբս զանազան մրցումներու մասնակցելու իրաւունք տուող հետեւեալ չափանիշերը որոշած է, թէեւ պահանջուած թիւով մրցող չգտնելու պարագային, լուազոյն տարածիչները նկատի պիտի առնուին.

1. Ոյժով բարձր թիւն ցառկ'լ	1 45	մէթր
2 Գեցած	1 15	»
3. » երկայնութիւն	2.73	»
4 Ոյժ աւաճ	5.15	»
5. Երեք քայլ	» (Ազատ)	11.50
6. Յողով բարձրութիւն	»	2.60
7 երկաթ նետել	»	10 20
8. Սկաւառակ	»	30.—
9. Քար	»	13 50
10. Նիզակ	» (Ազատ)	38.—
11 100 մէթր վազք	»	12 3/5 երկվ.
12. 1/4 մղոն	»	61 — վայր'.
13. 1/2 »	»	2 վայրիկ. 20 երկվ.
14. 1500 մէթր	»	5 վայրիկ.
15 3000 »	»	12 վայրիկ. 50 երկվ.

11. — Հեռաւոր վարիբու միութիւնները իրենց մրցորդներուն անունները մեզ տեղեկացնելէ առաջ, պէտք է նկատի առնեն վերոյիշեալ չափանիշերն, ու տեղոյն պատասխանատու Մարմն. դիւանէն վաւերացուած մարզիկներու չափանիշերովը մեզ իմացնեն իրենց ներկայացուցիչներուն անունները.

12.—12-14 տարեկան փորրիկներու արգելարշաւ (obstacle race) մը որոշուած է, որուն մանրամասնութիւնները նոյն օրը տեղոյն վրայ պիտի բացատրուին, Իւրաքանչիւր Մասնաճիւղ կամ Մարմն. միութիւն չեւրկուրէն աւելի մրցող չկրնար զրկել.

13.—Այս տարուան համար եւս որոշուած է լողալու բնդհ. մրցումներ կատարել, որոնց վայրը, թուականը եւ պայմանները ընդհուպ պիտի տեղեկագրուին.

2. Մ. Ը. Մ.ի Աթլէթիկ Յանձնախումբ

17 Յուլիս 1920